ԵՐԵՒԱՆ 40

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

horizon | HÉBDOMADAIRE ARMÉNIEN – Supplément en français | ARMENIAN WEEKLY – English supplement

VOL. 41 / No.46 (2128), 8+4+4+4 Էջ / $1.75

ԱՊՐԻԼ 13 / 13 AVRIL / 13 APRIL 2020

KOMITAS
SALON FUNÉRAIRE
«Nous reconnaissons que chaque famille est unique»
514.331.0400 · komitas.ca

Առաջնորդ Սրբազան Հօր Ս. Զատկուան Պատգամը ԿԵԱՆՔԻ ԱՍՏՈՒԱԾԱՊԱՐԳԵՒ ՅԱՂԹԱՆԱԿԸ

Կարդալ Էջ 3

Հայ Դատի յանձնախումբը կը դատապարտէ Թուրքիոյ մօտ Գանատայի դեսպանատան Արցախի հանդէպ հակադիր վարքագիծը

Ի հետեւումն Անգարայի մօտ Գանատայի դեսպանատան թուիթըրեան գրառման, որ կը մերժէ 2020-ի Մարտի 31-ի Արցախի նախագահական ընտրութիւններուն ազատ եւ անկախ ընթացակարգի արդիւնքները, Ջորեքշաբթի, 1 Ապրիլ 2020-ին, Գանատայի Հայ Դատի յանձնախումբը յատուկ հաղորդագրութեամբ մը հանդէս եկաւ՝ ուղղուած Գանատայի արտգործնախարարութեան դերատեսչութեան, որուն մէջ կը դատապարտէ դեսպանատան անհիմն յայտարարութիւնները եւ յաւելեալ պարզաբանումներ կը պահանջէ խնդիրին վերաբերեալ, պահանջելով՝ իսկոյն ջնջել յայտարարութիւնը։

Գանատայի Հայ Դատի յանձնախումբի հաղորդագրութեան մէջ յստակ կը նշուի, որ խորապէս հիասթափուած ու վրդոված է Անգարայի մօտ Գանատայի Դեսպանատան յայտարարութենէն՝ Արցախի արդար եւ ժողովրդավարական հիմունքներով ընթացած ընտրութիւններուն վերաբերեալ, աւելցնելով, որ Հելսինքեան պայմանագրով ամրագրուած ազգերու ինքնորոշման իրաւունքի սկզբունքը պէտք է անվերապահօրէն պահպանուի որեւիցէ հակամարտութեան կարգաւորման գործընթացին մէջ, որուն ցայտուն վկայութիւնն է Արցախի մէջ կայացած ընտրութիւնները, միաժամանակ նշելով, որ ազատ կամքի դրսեւորման այս քայլը անտեսելը խոչընդոտ է խաղաղութեան կառուցողական գործընթացին։

Յայտարարութեան մէջ Հայ Դատի յանձնախումբը կը չեշտէ նաեւ, որ Արցախի ժողովուրդի ազատ կամքի դրսեւորումը կարելի չէ անգիտանալ ի շահ Ատրպէյճանի նման բռնապետութեան մը, որ կը ղեկավարուի ընտանիքի մը կողմէ։

Յանձնախումբը կը յիշեցնէ, որ կը շարունակէ համագործակցիլ Գանատայի Արտաքին գործերու նախարարութեան դերատեսչութեան եւ պատկան մարմիններու հետ, բարձրաձայնելու համար գանատահայութեան մտահոգութիւնները այս գծով։

Հայ Դատի ցանձնախումբը Գանատայի Արտգործ Նախարարութենէն կը պահանջէ տուն կանչել Անգարայի մօտ Գանատայի Դեսպանը

3 Ապրիլ-ին, Գանատայի Հայ Դատի յանձնախումբը նամակ մը յղեց Գանատայի Արտաքին Գործոց նախարար՝ Ֆրանսուա Ֆիլիբ Շամբայնին, յորդորելով՝ ջնջել տալ Անգարայի մօտ Գանատայի դեսպանատան անխոհեմ թուիթըրեան գրառումը, որ կը վերաբերի Արցախի ընտրութիւններուն ազատ եւ անկախ ընթացակարգի արդիւնքներուն։ Աւելին, յանձնախումբը կը պահանջէ տուն կանչել դեսպանը՝ իր անպատասխանատու քաղաքական դիրքորոշումին համար, որ կը հակասէ Օթթաուայի խաղաղութեան եւ հաւասարակշռուած քաղաքականութեան սկզբունքներուն վրայ հիմնուած Գանատայի քաղաքականութեան։

Նշենք, որ վերոնշեալ նամակէն պատճէններ յղուած են նաեւ Գանատայի Վարչապետին, Փոխվարչապետին, խորհրդարանի բոլոր կուսակցութիւններու ղեկավարներուն։

ՀՅԴ Հայաստանի Գերագոյն Մարմինի Յայտարարութիւն

ՀՅԴ Հայաստանի Գերագոյն մարմինը 1 ապրիլին հրապարակեց յայտարարութիւն մը, որուն մէջ անդրադարձաւ Հայաստանի կառավարութեան կողմէ Ազգային ժողովին ներկայացուած «Արտակարգ դրութեան իրաւական դրութեան մասին» եւ «Ելեկտրոնային հաղորդակցութեան մասին» օրէնքներուն մէջ լրացումներ կատարելու նախագիծերուն։

Հաղորդագրութեան մէջ նշուած էր.

«Քորոնա» ժահրին դէմ պայքարի պատճառով ստեղծուած պայմանները պատճառաբանելով՝ Հայաստանի կառավարութիւնը հրատապ դրութեամբ Ազգային ժողով էր ներկայացրել «Արտակարգ դրութեան իրաւական դրութեան մասին» եւ «Ելեկտրոնային հաղորդակցութեան մասին» օրէնքների մէջ լրացումներ կատարելու նախագիծերի փաթեթը։

«Օրէնսդրական փոփոխութիւնները ենթադրում են այնպիսի ընդհանուր վերահսկողութեան սահմանում, որը խախտում է անձնական, մասնաւոր եւ ընտանեկան կեանքի սահմանադրական անձեռնմխելիութիւնը։ Համաճարակի դէմ պայքարի արդիւնաւէտութեան, սահմանադրական հիմնարար իրաւունքների խախտման եւ անվտանգութեան տեսանկիւնից խնդրայարոյց այս նախաձեռնութիւնը արդարացիօրէն ընդվզման եւ դժգոհութիւնների տեղիք տուեց։

«Խորհրդարանական քուէարկութեամբ նախագծի մերժումից յետոյ էլ, օրուայ

ՀՅԴ... Շար. Էջ 3

Արցախի Խորհրդարանին Մէջ Պիտի Ներկայացուին 5 Քաղաքական Ուժեր, Որոնց Կարգին՝ ՀՅԴ-ն

Նախագահական ընտրութիւններու երկրորդ փուլ

Կարդալ Էջ 5

Al·Nejmah

MIDDLE EASTERN SUPERMARKET

NOW OPEN

Սեփականատէր
Յարութ Սիփան

*Ընտանեկան բացառիկ գործառնութիւն
ուր կը գտնէք ձեր բոլոր կարիքները
ուտելիքներու վերաբերեալ*

IN HOUSE

COFFEE ROASTING & GRINDING
ROASTING FRESH NUTS
SESAME GRINDING TO MAKE FRESH TAHINA
TANOOR BREAD & IRAQI SAMOON

Սուրճ աղալ եւ խարկել
Հնտեղէն աղալ օրական դրութեամբ
Շուշմայ աղալ եւ թահինի պատրաստել
Թոնիրի հաց եւ իրաքեան սոմուն

Supermarket | RestaurantI I Bakery I Halal Butcher
Վաճառատուն, ճաշարան, փուռ, մսավաճառ

PHONE: **289.232.1200**
3085 Hurontario St, Unit 1-6, Mississauga

ԿԵԱՆՔԻ ԱՍՏՈՒԱԾԱՊԱՐԳԵԻ ՅԱՂԹԱՆԱԿԸ

«Ես եմ Յարութիւնը եւ կեանքը»

Բեթղեհէմէն մինչեւ Գալիլիա ու Երուսաղէմ։

Աստուածորդիին ձայնն է, որ կը լսուի՝ ԵՍ ԵՄ ՃԱՆԱՊԱՐՀԸ, ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԿԵԱՆՔԸ։

Գեթսեմանիէն մինչեւ Գողգոթա... Աստուածորդիին ձայնն է, որ կը լսուի դարձեալ՝ ԵՍ ԵՄ ՅԱՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԿԵԱՆՔԸ։

Նորափոր ու կոյս տապանէն... Աստուածորդիին ձայնն է որ կը լսուի դարձեալ աւելի հաստատակամ՝ «Մի լար, ո՛վ կին, ես ողջ եմ», «Մի Լար ցաւագին անմահը յարութիւն առաւ...»։

Հրաշափառ Յարութեան աւետիսն է, որ կը հնչէ դարձեալ ու կը տարածուի ամենուրէք։

Այսօր, երկինքի մէջ հրեշտակները կ'ուրախանան մարդոց համար եւ երկինքէն իջնելով կը փոխանցեն աշխարհին մեծագոյն աւետիսը, թէ՝ ՅԱՐԵԱԻ ԱՍՏՈՒԱԾ։

Այսօր երկրի վրայ ապրող քրիստոնեաներս ի՞նչպէս կ'արձագանգենք այս աւետիսին, հակառակ տիրող անբնական, վտանգաւոր եւ անորոշ կացութեան. կ'ուրախանա՞նք, կը ցնծա՞նք հրաշալի այս լուրով, թէ «Խաչեալը Յարութիւն առաւ, ձեզ բոլորիդ Յարութիւն կը պարգեւէ» (Շարական)։

Այս հարցումը այսօր բոլորիս կ'ուղուի՝ ինծի եւ քեզի. յիրաւի կ'ուրախացնէ՞ այս աւետիսը եւ կամ ինչո՞ւ պէտք է ուրախացնէ։ Միթէ բոլորս ալ նոյն վախի զգացումը չունի՞նք, թէ վաղը՝ գալիքը ինչ անակնկալներով լեցուն է։ Անորոշութեան մէջ կը տուայտինք, թէ պիտի կարենա՞նք յաղթահարել կործանարար համաճարակի բարդութիւններուն, անհատապէս եւ կամ հաւաքաբար։

Կարծէք Գեթսեմանի պարտէզին մէջ ենք այսօր աշակերտներուն հետ. մեզմէ ոմանք չուարած են, ուրիշներ անորոշութեան գիրկը խորասուզուած, չատեր՝ յուսահատ հոգեվիճակ մը կ'ապրին։ Կարծէք նորաբոյս համաճարակը այսօր առաւել եւս կը խորացնէ անկար, աղքատ, հիւանդ, գործազուրկ եւ կամ տարեց մարդոց դժուարութիւնը, ցաւն ու տառապանքը։

Այսօր, բոլորս ալ ինքնամեկուսացման մէջ ենք մեր տուներուն մէջ։ Այս ընթացքին, բոլորս ալ հասկցանք որ հաւասար ենք համաճարակին ստեղծած վտանգաւոր հարուածին դիմաց, բոլորս ալ տկար ու անկատար արարածներ ենք։ Վերջապէս, հասկցանք, որ մենք ինքնաբաւ չենք, կարիքը ունինք ուրիշ մարդոց եւ ուրիշներ ալ մեզի, մէկ խօսքով գիրար կարիքը ունինք։ Հապա, որքա՞ն կարիքը ունինք Փրկիչի մը, որ իր փրկարար ձեռքը երկարէ եւ մեզ ազատագրէ չարէն, աներեւոյթ թշնամիէն։

Հետեւաբար, պէտք է ցնծութեամբ լեցուինք, ուրախանանք, որովհետեւ Աստուածորդին, մեր Փրկիչը՝ Յիսուս Քրիստոս կ'ազատագրէ մարդը մեղքի եւ մահուան գերութենէն, եւ ինչպիսի մեծ հրա՜շք, Միաշաբաթի առաւօտուն գերեզմանի դուռն անգամ՝ վէմը չկա՛ր, հրեշտակի ձայնն էր, որ կը լսուէր, թէ՝ Քրիստոս Յարութիւն առած է մեռելներէն եւ իր մահով յաղթանակ կը տանի մահուան վրայ եւ մեզմէ ընդմիշտ կը հեռացնէ մեղքը։

Պէտք է ուրախանանք, որ Քրիստոս մահը խափանեց եւ անմահութեան յոյսը եւ յաւիտենական կեանքի երաշխիքը տուաւ մեզի։

Պէտք է հրճուինք, որ Աստուածորդիին յարութեամբ մահն է, որ յաղթուեցաւ եւ աստուածապարգեւ կեանքն է, որ յաղթականօրէն վերադարձաւ աշխարհ, այլ բանիւ՝ մարդկութիւնը Նոր կեանք ստացաւ Յիսուս Քրիստոսով. լսենք Իր ջինջ ձայնը, որ դարերու խորքէն կու գայ ու դէպ անմահութիւն կը տարածուի, յաղթականօրէն ըսելով՝ «ԵՍ ԵՄ ՅԱՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԿԵԱՆՔԸ»։

Այս օրերուն, մանաւանդ երբ մահուան երկիւղը կ'ապրինք, արդեօք կա՞յ աւելի գեղեցիկ ու քաղցր հրաւէր, ԵՍ ԵՄ ԿԵԱՆՔԸ։ Կեանք մը, որ աստուածային անհուն սիրոյ չողակաթումն է։ Կեանք մը, որ հաշմանդամներուն քալել կու տայ, կոյրերուն աչքերը կը բանայ, հիւանդները կ'առողջացնէ ու մեռելներուն յարութիւն կու տայ։

Վերջապէս, այսօր մարդը անդրադարձաւ եւ ըմբռնեց որ ինք կատարեալ չէ, ամենագէտ չէ, ամենակարող չէ...։ Եւ հետեւաբար, անորոշութեան խաւարին մէջ տուայտող մարդկութեան համար այսօր կա՞յ աւելի հրապուրիչ ու առաջնորդող հրաւէր, քան ԵՍ ԵՄ ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆԸ...։ Ճշմարտութիւն մը, որ բոլորին կը խօսէր, կը քարոզէր, աղօթք կը սորվեցնէր եւ կ'առաջնորդէր աստուածգիտութեան լոյսին։ Մէկ խօսքով, կը թելադրէր հեռանալ մեղքէն, չարէն, առեւտրեցնէն եւ թշնամութենէն եւ դառնալ ԻՄԱՆԱԼԻ ԼՈՅՍԻՆ։

Յոգնաբեկ ու տառապեալ մարդկութեան համար կա՞յ աւելի մխիթարիչ ու կազդուրիչ հրաւէր մը, քան՝ ԵՍ ԵՄ ՃԱՆԱՊԱՐՀԸ...։ Ճանապարհ մը, որ կը կանչէ անառակ որդին վերադառնալու իր հարազատ տունը։ Ճանապարհ մը, որ տուն կը կանչէ գղջացողը, խոստովանողն ու ապաշխարողը՝ ժառանգելու յաւիտենական կեանքը։

Ճանապարհ մը, որ մահուան սարսափը կը փարատէ։

Ճանապարհ մը, որ կեանքի անմահութեան ճամբան կը լուսաւորէ։ Ճանապարհ, որ Յարութեամբ ՆՈՐ ԿԵԱՆՔ կը պարգեւէ։

Ահա՛ պատգամը մեծագոյն Հրաշքին՝ ՀՐԱՇԱՓԱՌ ՅԱՐՈՒԹԵԱՆ...

Ահա՛ ՅԱՂԹԱՆԱԿԸ ԱՍՏՈՒԱԾԱՊԱՐԳԵԻ ԿԵԱՆՔԻՆ

Սիրելի՛ հարազատներ,

կեանքի յարութեան ըղձանքով եւ հաւատքի ջերմ ապրումներով կ'ողջունեմ բոլորդ՝ անխտիր։

Այո, կացութիւններ կան, որ մենք չենք կրնար փոխել, սակայն պէտք ունինք քաջութեան, համբերութեան, զգուշութեան եւ իմաստութեան։ Թող Յարութեան ոգեւորութիւնը վերանորոգէ մեր հաւատքը կենդանի եւ նոր ու անմահական կեանք պարգեւէ բոլորիս։

Կ'աղօթեմ, որ ճգնաժամի խաւարին մէջ, Յարուցեալ Փրկիչին լոյսը փայլատակէ, Քրիստոսի անմահական սէրը ճառագայթէ ու մանաւանդ թափուր գերեզմանէն չողարձակուող Յարութեան յոյսը քաջալերէ։

Փա՛ռք հրաշափառ յարութեանդ Քո, Տէ՛ր...

Քրիստոս Յարեաւ ի մեռելոց։

Օրհնեալ է Յարութիւնն Քրիստոսի։

Աղօթարար՝

ԲԱԲԳԷՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ
Գանատայի Հայոց Թեմի

Արցախի Ընտրութիւնները Չճանչցող Երկիրները Կը Դաւաճանեն Ժողովրդավարական Արժէքներուն
Հայ Դատի Կեդրոնական Խորհուրդ

Հայ Դատի Կեդրոնական խորհուրդը 3 ապրիլին հրապարակեց յայտարարութիւն մը, որուն մէջ անդրադարձաւ 31 մարտ 2020ին Արցախի Հանրապետութեան մէջ կայացած նախագահական (վեցերորդ) եւ խորհրդարանական (եօթներորդ) ընտրութիւններուն, որոնց, ըստ Կեդրոնական ընտրական յանձնաժողովին, մասնակցեցաւ Արցախի 105.540 իրաւասու ընտրողներուն 72,7 տոկոսը (76.728 ընտրող)։

Յայտարարութեան մէջ կը նշուի, որ դժբախտաբար, չարք մը պետութիւններ եւ միջազգային կազմակերպութիւններ, միանալով Ազրպէյճանի եւ Թուրքիոյ մենատիրական վարչակարգերուն, արձագանգեցին՝ հրաժարելով տեղի ունեցածը ճանչնալէ, իսկ որոշ պարագաներու նոյնիսկ դատապարտելով այդ ընտրութիւնները։ Միւսները զերծ մնացին ուղղակի քննադատութենէ՝ պատճառաբանելով, որ անոնք կը հրաժարին այս նախագահական եւ խորհրդարանական ընտրութիւններու օրինական չրջանակը ճանչնալէ՝ մէջբերելով ԵԱՀԿ Մինսքի գործընթացը։

«Մենք կը յիշենք բոլոր անոնք, որոնք հանդէս կու գան նման անպատասխանատու քննադատութեամբ, որ՝ 1992-ի մարտի 24-ի ԵԱՀԿ/ԵԽԽ-ի նախնական որոշումը, որ հիմք կը հանդիսանայ Մինսքի գործընթացին, ուղղակիօրէն կը վերաբերի Լեռնային Ղարաբաղի (Արցախ) «ընտրուած ներկայացուցիչներուն»՝ որպէս խաղաղութեան գործընթացին մասնակից։ Անշուշտ կ'ըսուի, որ «ընտրուած ներկայացուցիչներ» ունենալու համար անհրաժեշտ է կայացնել ընտրութիւններ, ինչ որ կը նշանակէ, որ արցախեան այս ընտրութիւնները կը հակասեն ոչ թէ ԵԱՀԿ-ին, այլ լիովին համահունչ են ԵԱՀԿ-ի հիմնարար համաձայնագիրներուն, որոնց հիմներուն մէջ կայ Մինսքի խումբի գործընթացը։

«Մենք կ'ակնկալենք, եւ, ըստ էութեան, մենք կը պահանջենք, որ պետութիւնները եւ միջազգային կազմակերպութիւնները, որոնք կը պնդեն, որ նուիրուած են մարդու իրաւունքներուն, արդարութեան եւ խաղաղութեան, զերծ մնան արցախցիներուն ինքնորոշման վերաբերող իրաւունքներու եւ ազատութիւններու իրականացման խոչընդոտող որեւէ գործողութենէ։ Միջազգային հանրութիւնը պարտաւոր է աջակցիլ Արցախին՝ ազատ եւ արդար ընտրութիւններու միջոցով արտայայտելու իր քնակչութեան կամքը», կ'ըսուի յայտարարութեան մէջ։

ՀՅԴ... Սկիզբը էջ1

իշխանութիւնը ո՛չ միայն չհրաժարուեց իր նախաձեռնութիւնից, այլեւ, արհամարհական վերաբերմունք դրսեւորելով խորհրդարանական ընդդիմութեան նկատմամբ, նոր արտահերթ նիստում կազմակերպուած քուէարկութեամբ վաւերացրեց այն։

«Ծանր ժամանակներ եւ մարտահրաւէրներ դիմագրաւող մեր հասարակութեան համար, երբ աւելի քան կենսական են հասարակական համերաշխութիւնը, քաղաքական հանդուրժողականութիւնը, պետական հաստատութիւնների արժեւորումն ու անխափան գործունէութիւնը, խորհրդարանական քաղաքական մեծամասնութիւնը դիմում է խորհրդարանական համակարգի ոտնահարման, քաղաքական ճեռնածութեան վարքագծի՝ սեփական քաղաքական քմահաճութիւնները բարձր դասելով պետական հաստատութիւնների բնականոն գործունէութեան եւ հանրային համերաշխութեան առաջնահերթութիւնից։

«Այսպիսի քաղաքական վարքագծով, ժողովրդավարութեան կոպիտ ոտնահարմամբ, միանձնեայ կերպով եւ անսխալականութեան բարդոյթի պայմաններում էլ իրականացնում է համավարակի կանխարգելման «կառավարումը»։ Ճգնաժամային կառավարման համար պատասխանատու մարմինների ու նրանց լիազօրութիւնների յստակեցման, կշռադատուած ու ժամանակին կատարուած քայլերի, արդիւնաւէտ եւ գործուն կառավարման փոխարէն հետեւողական կերպով փորձեր են կատարւում քաղաքացիների եւ զանգուածային լրատուամիջոցների նկատմամբ չպատճառաբանուած սահմանափակումներ եւ ընդհանուր վերահսկողութիւն սահմանելու ուղղութեամբ։ Անտեսւում են առաջնահերթ միջոցառումներ, իսկ որոշ դէպքերում ձեռնարկւում են քայլեր, որոնք այնքան էլ համարժէք չեն համավարակի ընդգրկուածութիւնը նուազեցնելու, մարդկանց կեանքն ու առողջութիւնը պահպանելու, ինչպէս նաեւ հետագայ տնտեսական, ֆինանսական եւ ընկերային ցնցումները մեղմելու, երկրի անվտանգութիւնը երաշխաւորելու պետութեան պարտաւորութիւնների հետ։

«ՀՅԴ Հայաստանի Գերագոյն մարմինը դատապարտում է իշխանութիւնների այս կեցուածքն ու վարքագիծը՝ մէկ անգամ եւս արձանագրելով, որ միայն միասնական ջանքերով եւ հանրային համերաշխութեամբ է հնարաւոր յաղթահարել այս անախադէպ մարտահրաւէրը»։

ՀՅԴ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԵՐԱԳՈՅՆ ՄԱՐՄԻՆ

ՀՈՐԻԶՈՆ www.horizonweekly.ca

Գանատա Պէտք Է Բացատրութիւն Տայ, Նաեւ՝ Պաշտօնազրկէ Թուրքոյ Մէջ Իր Դեսպանը

Արցախի մէջ նախագահական եւ խորհրդարանական ընտրութիւնները խժալուր արձագանգներ ստեղծեցին արեւմտեան որոշ շրջանակներու մէջ. Եւրոպական Միութեան արտայայտած՝ որոշ չափով զգուշաւոր ու վերապահ անբաւարարութենէն եաք, Թուրքիոյ մէջ Գանատայի դեսպանը քանի մը քայլ անդին գնաց եւ յայտարարեց, որ «Գանատա չի ճանչնար այսպէս կոչուած՝ ընտրութիւնները», զանոնք կը նկատէ «ԵԱՀԿի Մինսկի խմբակին խաղաղարար ճիգերուն վնաս բերող», ու աւելին՝ յայտարարեց, որ իր երկիրը «աջակից է Ազրպէյճանի հողերուն ամբողջականութեան»։

Ջենք ուզեր երկար կանգ առնել այն բառամթերքին առջեւ, որ կը կամրջէ թրքական, ազերիական, Գանատական, եւրոմիութեան եւ այլ արձագանգներ. Տարբեր տեղերէ նոյն՝ «այսպէս կոչուած ընտրութիւններ» արտայայտութիւնը բաւական բացատրող է։ Այլ կ'ուզենք քանի մը քայլ յառաջ անցնիլ Գանատայի Հայ Դատի յանձնախումբի պահանջէն, ըստ որուն՝ այս կեցուածքը անընդունելի է եւ կը սպասուի, որ անիկա չեզեալ համարուի։

Հիմնուելով ընդհանրապէս հայութեան իրաւունքներուն եւ մասնաւորաբար Ցեղասպանութիւնը ճանչցած ըլլալու Գանատայի արդարամիտ կեցուածքին վրայ, մեզի համար անբացատրելի է դեսպանատան այս յայտարարութիւնը, հետեւաբար, առաջին հերթին, կը սպասենք, որ Գանատա ո՛չ միայն յետս կոչէ այս արտայայտութիւնը (որ լոյս աչխարհ եկաւ «ճլուբլուն»՝ Tweeter-ի ճամբով), այլ նաեւ Հայաստանին, Արցախին եւ ամբողջ հայութեան բացատրութիւն տայ անոր մասին, օրինակ՝ ըսէ, որ դեսպանը ինքնագլուխ կատարած է այս յայտարարութիւնը, եւ եթէ այդպէս է, չեղեալ համարէ զայն ու դեսպանը պաշտօնազրկէ։

Այո՛. պէտք է պահանջել դեսպանին պաշտօնազրկումը, ինչ որ մասամբ պիտի դարմանէ դիւանագիտական-քաղաքական այս կաթը, որ ի վերջոյ նոյնինքն Գանատային է։

Միջանկեալ՝ ծանօթանանք դեսպանին։ Կը կոչուի Ճամալ Խոխար (մեզ այդքան ալ չի հետաքրքրեր թէ այս անունը ինչպիսի՞ ծագումի կը տանի դիւանագէտը). այս պաշտօնին կոչուած է այս տարուան Յունուարի սկիզբը։ Գանատայի դիւանագիտական անձնակազմին միացած է 1986-ին, զանազան պաշտօններ վարած է լատին ամերիկեան երկիրներու մէջ, գործած է նաեւ Ուաշինկթընի մէջ, դրամատնային միջազգային ասպարէզ, 2010էն 15 պաշտօնավարած է Պրազիլիոյ մէջ, իսկ այս պաշտօնին կոչուելէ առաջ, եղած է Սան Տիեկոյի մօտակայ Լա Հոյա քաղաքին մէջ կեդրոն ուսնեցող՝ Ամերիկաներու Հիմնարկութեան վարիչ կազմի անդամ։

Այսքանը բաւարար տեղեկութիւն է, որոշ գաղափար մը կազմելու անոր վաստակին մասին, տեսնելու՝ որ ան նորելուկ դիւանագէտ մը չէ։ Սա նաեւ ինքնաբերաբար կ'ենթադրէ, որ խոխար պէտք է բաւական ծանօթ ըլլար պատմութեան, նման հրապարակում ընելէ առաջ՝ սերտած ըլլար Արցախի տագնապին պատմութիւնը, ծանօթացած ըլլար ծալքերուն, որպէսզի հալած իւղի պէս կուլ չտար թրքօ-ազերիական մեկնաբանութիւնն ու կեցուածքը, առ նուազն՝ ծանօթացած ըլլար, թէ Արցախը ո՛չ մէկ տեսն մաս կազմած է Ազրպէյճանին, որուն «հողերուն ամբողջականութեան» պահպանումին ախոյեանի պատմուճանով հանդէս կու գայ ինք։

Աւելորդ կը նկատենք հոս երկար-բարակ պատմութիւնը ընելու հայկական Արցախը Ազրպէյճանին նուիրելու ստալինեան «հնարք»ին ու անոր հետեւած զարգացումներուն, որոնց անարդարութիւնը փաստուած է ու վերահաստատուած՝ վերջին տասնամեակներուն։ Աւելորդ է նաեւ հարց տալը, թէ Թուրքիոյ մէջ Գանատայի դեսպանին ի՞նչ գործն է կամ իրաւասութիւնը՝ նման կարծիք յայտնելու, կարծիք՝ որ պարզապէս կ'ապացուցէ հարցին էութեան ու ծալքերուն անտեղեակ ըլլալը եւ թրքական ներշնչումէ տարուած ըլլալը։ Սա արդէն զինք ու իր երկիրը, կառավարութի՛ւնը կը դասէ Արցախի, հետեւաբար նաեւ հայութե՛ան հանդէպ անարդարութիւն ընողներուն շարքին։ Եւ թող ո՛չ ոք ինքնապաշտպանութեան փորձ ընէ, թէ նման կեցուածք կը բխի Մինսքի խմբակին ճիգերուն գօրավիգ ըլլալու մօտեցումէն։

Գանատայի իշխանութենէն հայութեան սպասած բացատրութիւնը եւ մասնաւորաբար դեսպանին պաշտօնազրկման պահանջը նկատի ունի այն հաւանականութիւնը, որ դեսպանը ինքնագլուխ կերպով կեցուածք արտայայտած է կամ կաշառուած՝ Թուրքերէն։ Վերջին տարիներուն, մէկը աւելի դիւանագէտներու ու քաղաքական գործիչներու՝ նման կաշառքներու թակարդը իյնալուն փաստերը աղաղակող եղան. Եւրոպայի խորհրդարանի անդամներ ալ բռնուեցան «կարմիր ձեռքերով», ու փաստուեցաւ, որ Ազերիական կաշառքը ազդեցութիւն ունեցած է անոնց վարմունքին վրայ։ Այս պահանջները նաեւ պէտք չէ դիտել իբրեւ միամտութիւն՝ Գանատայի քաղաքական վարքագիծին, այլ մեր դատողութիւնը կը հիմնուի նոյնինքն Գանատայի նախընթաց ուղղամիտ կեցուածքներուն վրայ։ Պարզ օրինակներ էին Ցեղասպանութեան ճանաչումը եւ այդ առիթով Թուրքիոյ հետ պաղութիւնը, նաեւ չենք մոռցած, որ ՆԱԹՕ-ի անդամ Գանատան էր որ քանի մը ամիս առաջ, իր ուժերը քաշեց Սուրիա առաքուած ՆԱԹՕ-ի ուժերէն եւ իրողապէս հակադրուեցաւ Միացեալ Նահանգներու նախագահին որդեգրած կեցուածքին, երբ ականատես եղաւ քիւրտերուն դէմ էրտողանեան յարձակողականին եւ անհակակշիռ սպանդներուն։ Ո՛չ ոքի համար նախընտրելի է Գանատայի նման երկիրներ տեսնել այն ցանկին վրայ, որոնք Հայ Դատի Կեդրոնական խորհուրդին բնորոշումով՝ կը դաւաճանեն իրե՛նց իսկ դաւանած ժողովրդավարական արժէքներուն։

Հարցին կը մօտենանք, պէտք է մօտենալ ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ ու այս պարագային՝ հայութեան եւ Արցախի մարդկային-ազգային իրաւունքներուն դիտանկիւնէն։ Դեսպանն ու իրեն պէս մտածող-դիրքաւորուողները արդեօք լուր չունի՞ն, որ Թուրքիոյ եղբայր ու սերտ դաշնակից հռչակուած Ազրպէյճանը ամէն օր կը խախտէ իր իսկ կողմէ ընդունուած զինադադարը, կրակոցներով ու յաճախակի ռմբակոծումներով կ'ահաբեկէ, այսինքն՝ պետական ահաբեկչութիւն կը գործադրէ Հայաստանի ու Արցախի սահմանային շրջաններու բնակչութեան, պաշտօնական զինեալ ուժերուն դէմ։ Եւ երեւակայել, որ դեսպանին յայտարարութիւնը կը զուգադիպէր Քառօրեայ Պատերազմին չորրորդ տարեդարձի օրերուն։ Այսպիսիներ արդեօք իրենց միտքէն անցո՞ց են դատապարտել այդ ոճրային արարքները, որոնց չարքին՝ Սումկայիթն ու հայ սպայի մը վայրագ սպանութիւնը, կամ՝ հարց տալ, թէ Արցախը ինչու տասնամեակներ առաջ, խորհրդային տարիներո՛ւն իսկ ծառացաւ Ազրպէյճանի իշխանութեան դէմ, որովհետեւ շրջանի հայութեան տարրական իրաւունքները ամէն օր կ'ոտնակոխուէին եւ Արցախը կը մատնուէր հայաթափումի։ Եթէ իրենք ըլլային արցախցիներուն տեղը, ի՞նչ պիտի ընէին, ի՞նչ պիտի ընէին այսօր։

Կրկնենք. աչքի առջեւ ունենալով Գանատայի իշխանութիւններուն ընդհանրապէս արդարատեսչ եւ արդարադատ ընթացքը, հայութիւնը այսօր իրաւունք ունի բացատրութիւն պահանջելու դեսպանին յայտարարութեան մասին, պահանջելու՝ որ ան պաշտօնազրկուի, որպէսզի նախընթաց չստեղծուի, նաեւ՝ ուղեցոյց ծառայէ այլոց։ Սա պէտք չէ դիտել իբրեւ անուղղակի հակադարձութիւն՝ Հայաստանի մէջ Միացեալ Նահանգներու նախկին դեսպաններէն՝ Էվընզի պաշտօնազրկման, որ, ինչպէս ծանօթ է, տեղի ունեցաւ անարդար մօտեցումի հետեւանքով։

Ամէնէն կարեւորը։ Այս պահանջին հետապնդումը պէտք չէ թողուլ միայն Հայ Դատի ծառայողներուն ուսերուն, որովհետեւ սա ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ գործ է եւ պէտք է ներգրաւէ եւ միացնէ Հայաստանի, Արցախի իշխանութեանց եւ սփիւռքներուն ճեռքերը։

Ս. ՄԱՀՍԷՐԷՃԵԱՆ

Ո՛Չ՝ այս պսակին

Բ.

Այո՛, մարդկութեան սպառնացող մահաբեր ժահրը, ժահրերը՝ պսակաձեւ ըլլան թէ այլ տեսքով, լայն տարածում կը գտնեն մասնաւորաբար այսօրուան աշխարհայնացման կամ համաշխարհայնացման ընդհանուր իրավիճակին ի հետեւանք, ինչպէս ինքն ալ կը հաստատէ Քեպէկի Լաւալ համալսարանի այժմ հանգստեան կոչուած փրոֆեսորը՝ Simon Langlois, Le Devoir *օրաթերթի* 30 *մարտ* 2020*-ի թիւին մէջ* *Ce qui va changer après la crise sanitaire* (Ի՞նչ պիտի փոխուի առողջապահական տագնապէն ետք) *իր յօդուածով։*

Այդ կենսական, անյետաձգելի փոփոխութիւններուն անդրադառնալու եմ ուրիշ անգամ, այժմ սակայն կ'ուզեմ հարց տալ, թէ արդեօք նոյն համաշխարհայնացման իսկ չնորհիւ, երբ մարկութեան հասարակաց հարցերու լուծման համար բոլորը միասին կրնան լուծումներ փնտռել, կարելի պէտք չէ՞ ըլլար նախատեսել նման տագնապներ ու կանխել անոնց հետեւանքները։

Ճիշտ այս հարցին է, որ կ' անդրադառնայ նոյն օրաթերթի տնտեսական աչխատակիցը, 3 *ապրիլին՝* Ces crises inattendues qui n'en sont pas (Այս անակնկալ տագնապները, որ այնիսկ ալ անակնկալ չեն) *իր դիպուկ յօդուածով։ Արդարեւ, Տաւոսի համաշխարհային տնտեսական համախմբումը, որ* 15 *տարիէ ի վեր կը կազմակերպուի ամեն տարի, աչխարհին սպառնացող վտանգներուն վերաբերեալ իրեն ներկայացուող* 2006*-ի իսկ զեկուցագրով տեղեկացուած էր, թէ մեծագոյն վտանգներէն մէկը, որ մարդկութեան կը սպառնայ, մահացու կռիւի մը նոր ժահրի համավարակը կրնայ ըլլալ։ Այս ահազանգը, որ չուրջ հազար միջազգային մասնագէտներու կողմէ հնչեցուած է ու կրկնուած է տարուէ-տարի, պարզապէս լուրջի չէ առնուած՝ այլ՝ չահադիտական նկատողութիւններով։*

Մինչդեռ, ինչպէս դիտել կու տային Շերպրուքի գոլեժի զոյգ փրոֆեսորները, որոնց յօդուածին անդրադարձած էի այս յօդուածաշարքին սկիզբը, համաչխարհային համագործակցութեան չատագով Կարլ Մարքս պիտի ծափահարէր Առողջութեան միջազգային կազմակերպութեան ընդհանուր տնօրէն Tedros Adhanom Ghebreyesus*-ի հետեւեալ յայտարարութիւնը. «Այս պսակաձեւ ժահրը կը ներկայացնէ աննախընթաց սպառնալիք մը։ Բայց ան նաեւ աննախընթաց առիթ մըն է, որ մեզ համախմբէ հասարակաց թշնամիի մը դէմ, համայն մարդկութեան մէկ թշնամիին դէմ»։ Այսինքն՝ «պրոլետարնե՛ր բոլոր երկիրներու, միացէ՛ք»,— պիտի եզրակացնէր ան դարձեալ։*

Դժբախտաբար այսօր չկայ ուժ մը, որ յաջողի համախմբել մարդկութեան ներուժը պայքարելու համար յաղագս նման աղէտներու կանխարգիլման։ Աչխարհի ամենէն հարուստ պետութիւնը, որ անցեալին կարողացած է այսպիսի պարագաներու առաջնորդողի դեր խաղալ, ներկայիս ոչ միայն հրաժարած է նման դերակատարութենէ, այլեւ դադրեցուցած է կամ նուազագոյնի իջեցուցած միջազգային կազմակերպութիւններու իր ներդրումները։

«ԱՄՆ-ի կողմէ ձգուած պարապութիւնը չէ լեցուած որեւէ ուրիշին կողմէ»,— դիտել կու տայ հրեայ պատմաբան, իմաստասէր ու գրող Yuval Noah Harari TIME *չաբաթաթերթի* 30 *մարտի համարին մէջ տպագրած իր* Disease in a world without a leader (Հիւանդութիւն՝ անղեկավար աշխարհի մը մէջ) *յօդուածին եզրակացութեան մէջ։ Ան կ'աւելցնէ. «Այլատեացութիւնը* (xenophobia)*, մեկուսապաշտութիւնը* (isolationism)*, եւ կասկածամտութիւնը* (distrust) *այժմ կը յատկանչեն միջազգային դրեթէ ամբողջ համակարգը։ Առանց փոխադարձ վստահութեան ու միակամութեան, պիտի չկարենանք կասեցնել պսակաձեւ ժահրի համաճարակը։ Եթէ այս համաճարակը պատճառ դառնայ աւելի սերտ համաչխարհային համագործակցութեան՝ այդ պիտի ըլլայ ոչ միայն յաղթանակ մը ընդդէմ պսակաձեւ ժահրին, այլեւ բոլոր ապագայ ախտածիններուն»։*

Ոչ միայն...

Ոչ միայն հիւանդութիւններուն, այլեւ մարդկութեան սպառնացող չատ այլ «ժահր»-երու։ Բայց այդ մասին ուրիշ առիթով։

Ջեմ կրնար այս մտորումները աւարտել առանց վերյիչելու ՀՅԴ ծրագրին մէջ երկար ժամանակ առկայ պարբերութիւն մը, որուն կարծես արձագանգեր են վերոյիչեալ յօդուածագիրները, անշուշտ առանց երբեք զայն կարդացած ըլլալու։ Ինչպէ՞ս առիթը պիտի ունենային կարդալու ՀՅԴ ծրագիրը։ Ահա այդ պարբերութիւնը, որ կ'արժէ վերստին ներմուծել մեր ծրագրին մէջ.

«Պատմութեան առարկայական եւ ենթակայական ստեղծագործ ուժերու դաշնադրութեան մէջ է գրաւականը այն անտարակուսելի յաղթանակին, զոր պիտի տանի աչխատաւոր մարդկութիւնը թէ՛ բնութեան ուժերուն եւ թէ՛ ընկերութեան մէջ գարերէ ի վեր տիրող չահագործման ու անարդարութեան դէմ»։ Այստեղ պէտք է հասկանալ անշուշտ բնութեան կործանարա՛ր ուժերուն դէմ։

Ո՛չ, Մարդը արժանի չէ, պէտք չէ՛ ըլլայ այդ կործանարար ուժերէն յառաջացած այս տեսակի ժահրապսակի մը։

ՎՐԷԺ-ԱՐՄԷՆ
(վերջ)

horizon
ARMENIAN WEEKLY
VOL. 25 No. 46 (1275) APRIL 13, 2020

Armenia reports 7th Coronavirus death as cases soar

YEREVAN—Armenia reported its seventh death related to the Coronavirus pandemic, as registered cases soared to 736, with 73 cases reported in just 24 hours, according to data by the National Disease Control and Prevention Centre.

Healthcare officials also reported that 43 patients who had been in self-isolation or quarantined had recovered bringing the number of active cases in Armenia to 686 as of April 3.

Health Ministry spokesperson Alina Nikoghosyan reported the death on April 2 of a 76-year-old female patient who was hospitalized at the Nork Infectious Diseases Clinical Hospital. The patient, who was diagnosed with COVID-19, had pre-existing health issues.

Earlier on the same day, Nikoghosyan announced the death of a 78-year-old woman who was also at the Nork Hospital. Her pre-existing conditions included diabetes and hypertension, complicating the treatment of the coronavirus. Nikoghosyan said that the woman was not a citizen of Armenia, but did not elaborate on her origins.

On April 3, Armenia's National Assembly said it will allocate 500 million drams (approximately $1 million) from its annual budget to the state budget. The funds will support measures aimed at the prevention, control and treatment of the COVID-19 epidemic, National Assembly Speaker Ararat Mirzoyan said.

The sum includes funds allocated for the financing of various contracts for the whole year, but not yet signed, financial resources for business trips for the first quarter, but not actually spent, as well as the funds earmarked for the second fiscal quarter of 2020.

The allocation will also include the entire fund for the awarding of 700 employees and deputies, as well as funds provided for energy services and other expenses.

NATIONWIDE LOCKDOWN EXTENDED

A nationwide lockdown to contain the spread of COVID-19, the coronavirus, imposed last week by Armenia's government was extended for at least 10 additional days, Prime Minister Nikol Pashinyan announced on social media. The lockdown was scheduled to expire March 31.

Citing "alarming statistics," Pashinyan moved to extend the lockdown saying, "many people think that the coronavirus will not reach them. I would really like to share your optimism. If we don't take care of ourselves, if we don't take emergency measures, the coronavirus will reach us very quickly," Pashinyan warned.

He also commented on the location data bill that was voted down in parliament. He said the bill's purpose is for the authorities to tactically and rapidly trace direct contacts of confirmed cases, citing potential community transmission cases.

Armenia's Health Minister Arsen Torosyan said on the same day that the number of confirmed coronavirus cases in Armenia had reached 532—a jump of 50 cases in one day. Torosyan added that 31 people had tested negative after being initially diagnosed with the virus and sticking to a strict quarantine regimen. He also added that 150 additional people were released from quarantine, explaining that 65 of them were Armenia citizens

Continued on page **E2**

Chess champ Levon Aronian's wife dies two weeks after car crash

YEREVAN—The wife of Armenia's Chess Grandmaster Levon Aronian, Arianne Caoili, died on March 31 in a Yerevan hospital where she was recovering from injuries sustained after a car accident in Armenia two weeks ago. Caoili, herself a world a chess champion from Australia, was 33.

"I have no words to express the grievance over my wife Arianne's death. She was intelligent, hard-working and joyous person that lived a beautiful life," Aronian said in a Twitter post announcing his wife's passing. "I love you honeybun, sleep tight."

Many renowned chess players from all over the world, namely Magnus Carlsen and Anish Giri, expressed condolences to Aronian.

On March 15 Caoili's Lexus R350 crashed into a supporting column under a bridge near the intersection of Sebastia street and Isakov avenue in Yerevan. Local media initially indicated she was in "serious condition" but reported that she was conscious. Aronian, who was in Spain at the time of the incident, returned home as quickly as possible despite growing travel restrictions.

Caoili was born in Manila, Philippines. Her mother was Dutch, her father Filipino, and she spent much of her early life in Australia. She learned chess at the age of six. At nine she began playing in international tournaments, and on her 14th birthday she won the Asian under-16 Girls' Championship. She competed for Australia at the Chess Olympiads in 2004, 2006, 2008, 2010 and 2012.

In 2008, Caoili began dating Aronian, whom she had met at the World Youth Chess Championships in Las Palmas a few years earlier. The couple was engaged in 2015 and married in 2017 at the Saghmosavank Monastery, with then President Serzh Sargsian and his wife Rita in attendance.

ANCC demands retraction of tweet made by Canadian Embassy on Artsakh elections and for the Ambassador to be recalled

OTTAWA — On April 3, the Armenian National Committee of Canada (ANCC) sent a letter to Canada's Foreign Affairs Minister, the Hon. François-Phillipe Champagne, urging the minister to demand the retraction of a reckless tweet made by the Canadian Embassy in Ankara regarding the recent General Election that took place in the Republic of Artsakh. Furthermore, the ANCC demanded for the ambassador to be recalled "for his irresponsibility and his inability to defend and uphold Ottawa's official foreign policy objectives of peace and balanced diplomacy"

In a tweet published on April 1, the Canadian embassy independently made a statement voicing Canada's support for Azerbaijan's territorial integrity and not recognizing the fair and free elections held in Artsakh. The tweet was not shared nor endorsed by Global Affairs Canada.

"Canada has always maintained a balanced approach towards the peaceful settlement of the Artsakh (Nagorno-Karabagh) conflict through its support of the Organization for Security and Co-operation in Europe's (OSCE) Minsk Group initiative that is based on the core principles outlined in the Helsinki Final Act." read a part of the letter.

"This tweet does not reflect Canada's balanced position on the issue and it must be retracted immediately" said Hrag Tarakdjian and Shahen Mirakian, co-presidents of the ANCC, commenting on the issue.

In the letter, the ANCC co-presidents added "Such statements not only fuel anger and concern within Canadians but have the potential of exposing shortcomings within our foreign service, something we cannot allow to happen. Global Affairs Canada simply cannot allow its diplomats abroad to interpret the government's position as they see fit."

"The principle of self-determination, enshrined in the Helsinki Final Act, must be unconditionally upheld in any conflict settlement. These fair and free elections, that witnessed over 72% turnout, were a powerful and remarkable testament to that principle of utmost importance. Failing to realize this is what will impede a constructive peace process and jeopardize the safety and security of the people of Artsakh. Self-determination and democratically elected representatives are the only guarantees to preserve Artsakh's security and prevent a genocidal campaign." mentioned the letter, on which the Prime Minister, the Deputy Prime Minister, all party leaders and their foreign affairs critics were copied on.

Countries opposing Artsakh elections betray democratic values and their own international obligations: ANC-International

YEREVAN — On March 31, the Republic of Artsakh (Nagorno Karabagh) successfully held its presidential (sixth) and parliamentary (seventh) elections, with the Central Election Commission (CEC) reporting that 72.7 percent (76,728 voters) of Artsakh's 105,540 eligible voters cast ballots at polling places across the republic.

Sadly, several individual states and international organizations responded to this exercise in democratic self-government by joining with the authoritarian regimes of Azerbaijan and Turkey in refusing to recognize and — in some cases — even condemning these elections. Others withheld direct criticism, explaining their refusal to recognize the legal framework of these presidential and parliamentary elections considering the ongoing OSCE Minsk Process for peacefully resolving the Nagorno-Karabagh (Artsakh) conflict.

We remind all those offering such ill-advised criticism that the initial OSCE/CSCE decision of March 24, 1992, which laid the very foundation for the Minsk Process, refers directly to the "elected representatives" of Nagorno-Karabagh (Artsakh) as a participant in the peace process. It goes without saying, that, in order to have "elected representatives," elections must be held, meaning that these Artsakh elections are not at odds with the OSCE but, rather, fully in line with the foundational OSCE agreements at the heart of the Minsk Group process.

The OSCE Minsk Group Co-Chairs, in their March 31 statement on these elections, prop-

Continued on page **E2**

Runoff in Artsakh Presidential elections; 5 parties to make up Parliament

STEPANAKERT—The chairwoman of the Artsakh's Central Electoral Commission on April 1st announced that none of the 14 presidential candidates reached the 50 percent threshold of votes during the March 31 national elections, thus forcing a runoff in the presidential elections. She also announced that five parties will be represented in Artsakh's National Assembly, each earning more than the required five percent of votes.

Srbuhi Arzumanyan, the CEC chairwoman, also said that the runoff elections will be held on April 14.

In making the announcement, Arzumanyan said that of the 104,348 eligible registered voters, 76,728—or 73.5 percent—participated in Tuesday's elections.

She explained that there were 2,625—or 3.5 percent—invalid votes, where voters had not filled out their ballots properly.

Leading the votes in the presidential polls was former Artsakh State and Prime Minister Arayik Harutyunyan who received 36,076, or 49.26 percent of the votes. Artsakh Foreign Minister Masis Mayilyan came in second with 19,360, or 26.4 percent of the votes. In third place was Vitaly Balasyanyan with 10,755, or 14.7 percent of the votes. In fourth and fifth place were Armenian Revolutionary Federation's Davit Ishkhanyan and Artsakh Parliament Speaker Ashot Ghulyan with 1,873 (2.56 percent) and 1,683 (2.3 percent) votes respectively.

ARF candidate Ishkanyan, in a Facebook post, thanked all voters who "put their trust in the ARF and me."

"The elections that took place in Artsakh demonstrated that each of us treats the future of our nation with great responsibility and is well aware of the importance of individual participation on that road," Ishkhanyan said in his message to voters.

"I would like to express my gratitude to all those who trusted and cast their vote for the Armenian Revolutionary Federation and me, as a candidate for president of Artsakh." said Ishkhanyan.

"The ARF has always been accountable to the people and responsible for its positions. Unity for all. Stay healthy," concluded Ishkhanyan.

Arzumanyan, the Artsakh CEC chairwoman, said explained that political parties needed five percent of the votes to retain seats in parliament, while the threshold for political blocs, or alliances, was seven percent. As such, she reported, five parties and blocs will be represented in Artsakh's new legislature. They are:

Free Homeland bloc with 29,688 (40.4%) of votes;

Unified Homeland Party with 17 365 (23.63%) of votes;

Justice for Artsakh Party with 5,865 (7.9%) of votes;

Armenian Revolutionary Federation with 4,717 (6.4%) of votes; and

Democratic Party of Artsakh with 4,269 (5.81%) of votes.

